

# ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՐԵՏԱ ԴԱՆԵՂՅԱՆ

### ԲԱՑԱՌԻԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

(Դիվան Եղիա Մուշեղյանի. գիտական նկարագրություն)

18-րդ դարի հայ ճանաչված անհատականություններից մեկը՝ բանահավաք, քաղաքական ու հասարակական գործիչ վաճառական Եղիա Մուշեղյանը (Կարնեցի, Աստվածատուրյան), թողել է հարուստ գրական ժառանգություն, որի պատմագիտական արժեքը գերազնահատելի դժվար է: Մեզ է հասել նրա հուշագրությունը<sup>1</sup>, ինչպես նաև տարածանք մեծաթիվ վավերագրեր ամփոփող դիվանը: Վերջինիս հետ հաղորդակցվելու հնարավորության համար պարտական ենք, փաստորեն, Եղիայի համար դրամատիկ դիպվածին, քանի որ 1724թ. չարաբաստիկ հանգամանքների բերումով<sup>2</sup> Ռուսաստանում ձերբակալված Եղիա Մուշեղյանի դիվանը բռնագրավվեց և Մոսկվայի տարբեր արխիվներում թափառելուց հետո ի վերջո հանգրվանեց «Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի» (АВПР) ֆոնդերից մեկում, որը կոչվում էր «Ռուսաստանի առնչությունները Հայաստանի հետ»<sup>3</sup>: Դժվար է ասել՝ որտե՞ղ ապաստան կգտներ կամ կպահպանվե՞ր, արդյոք, դիվանը, եթե չձախողվեր Ե. Մուշեղյանի դիվանագիտական առաքելությունը, այն է՝ պարսից շահ Թահմասպի ուղերձները եվրոպական տերություններին հանձնելու Եղիայի ստանձնած պարտավորության կատարումը, որը տապալվեց Ռուսաստանում նրա բանտարկության պատճառով<sup>4</sup>:

Եղիայի անսպառ հետաքրքրասիրությունը, աշխարհ ճանաչելու ձգտումը, սերը գիտության հանդեպ պետք է որ իրենց կնիքը դնեին նրա ողջ գործունեության, անշուշտ, նաև դիվանի վրա: Նրա մեծածավալ դիվանը բովանդակում է նամակներ, հաշ-

վեմատյաններ, «ձեռքատետրեր», պարտավորագրեր, համաձայնագրեր ու առևտրական այլևայլ փաստաթղթեր, կտակներ, խնդրագրեր ու պետական պաշտոնական վավերագրեր, զանազան ցուցակներ և այլն: Առանձին ուշադրության են արժանի դիվանը հարստացնող ժողովածուները՝ տաղարաններ, բժշկարաններ, աղոթագրքեր, նաև բառարաններ, աստղագիտությանը, արհեստներին վերաբերող աշխատություններ, թարգմանություններ, ընդօրինակություններ և այլն: Եթե նկատի ունենանք նաև դիվանի նյութերի աշխարհագրական սահմանները (Իրան, Իրաք, Հնդկաստան, Անդրկովկաս, Ռուսաստան, Թուրքիա, Եվրոպական երկրներ և այլն), ապա առավել պարզ կդառնա այդ նյութերի՝ որպես պատմական սկզբնաղբյուրների, գիտական արժեքն ու կարևորությունը:

Մուշեղյանի դիվանի մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք հայ ժողովրդի պատմության վերաբերյալ Լազարյանների հրատարակած փաստաթղթերի ժողովածուում<sup>5</sup>: Դիվանի առաջին հետազոտողը, ըստ էության, ակադ. Ա. Հովհաննիսյանն էր, որը 20-րդ դարի 10-ական թվականներից գիտական շրջանառության մեջ դրեց այդ փաստաթղթերը: Հետագայում Մուշեղյանի ժառանգությանն անդրադարձել է պրոֆ. Ա. Աբրահամյանը, որի աշխատասիրությամբ լույս տեսավ դիվանից քաղված նամակների և որոշ այլ նյութերի ժողովածու<sup>6</sup>: Անշուշտ, կարելի է նշել մի քանի հեղինակների, որոնք «մեկուսի» զբաղվել են սույն ժառանգության հետ կապված այս կամ այն խնդրով<sup>7</sup>, իսկ Մուշեղյանին նվիրված զեկուցումներ լավեցին 1986-ին կայացած հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովում, երբ մեր օրերում առաջին անգամ գիտական լայն լսարանին իրազեկվեց այդ կարկառուն գործչի և նրա դիվանի մասին<sup>8</sup>: Այդուհանդերձ, այս բացը լրացնելուն է միտված սույն հոդվածը: Նկատի ունենալով խնդրո առարկա նյութի յուրահատկությունը և ծավալը հարմար գտանք շեշտադրել բովանդակային մասը՝ առավելագույնս օժանդակելու նյութերի խորքային բացահայտմանը:

Հիշյալ արխիվում Եդիայի դիվանի թղթապանակները խմբավորված են յոթ «կապոցներում» (ըստ դիվանատան ցուցակի՝ "связка"), որոնք համարակալված են լատինական այբուբենի առաջին յոթ տառերի հերթականությամբ. ուստի թղթապանակը

կամ գործը նշվում է ըստ կապոցի և ապա՝ նրանում ընդգրկված գործերի հերթական համարի (A-1, B-5 և այլն):

Ինչպես կապոցները, այնպես էլ թղթապանակները կրում են դիվանատան պայմանական վերտառությունները (ռուսերեն), որոնք միշտ չէ, որ համապատասխանում են նյութերի բովանդակությանը:

Համառոտ ներկայացնենք կապոցների կազմությունը.

A — բաղկացած է 16 գործից (թղթապանակ), որոնք պարունակում են նամակներ, հաշվեմատյաններ, թարգմանական վարժություններ, բժշկական խորհուրդներ, բանաստեղծություններ, խրատներ, քարոզչիրք, աշխարհագրության դասագիրք և այլն: Ակնհայտ է, որ նման բովանդակությունը չի արտացոլվել դիվանատան հետևյալ վերտառության մեջ. «Կապուչինի թղթերը»:

B — ամփոփում է 32 թղթապանակ հաշվեմատյաններ, խնդրագրեր, վկայություններ, նամակներ և այլն: Վերջիններս մեզ են հասել հիմնականում հեղինակի կողմից առանձնացված խմբերով՝ ըստ նամակագիրների, և կրում են Շդիայի համապատասխան նշումները: Այս բաժանումները, սակայն, որոշ թղթապանակներում խախտված են:

C — մեկ գործ է, որն ամփոփում է քարոզչորքեր ու եկեղեցական պատմություններ:

D — բաղկացած է 3 գործից, որտեղ ընդգրկված են նյութեր քերականության և թվաբանության վերաբերյալ: Դիվանատան վերտառությունն արտացոլում է միայն առաջին մասը՝ «Հայկական քերականության թղթապանակներ»:

E — ամփոփում է 2 գործ նամակներ:

F — 2 գործ՝ նամակներ, իրերի ցուցակ և մի շարք այլ կարգի վավերագրեր:

G — կազմում է 5 գործ նամակներ, ինչպես նաև ամենատարբեր թեմաներով նյութեր. մինչդեռ դիվանատան վերտառությունն է՝ «Հայկական նամակներ առանց թարգմանության»:

Բոլոր կապոցները դիվանատան կողմից թվագրված են 1724թ., սակայն, վավերագրերը վերաբերում են 1703–1724թթ.: Գործերը տարբեր ծավալի են՝ 16 թերթից մինչև 200-ից ավելի:

Դատելով ըստ այն փաստերի, որոնք խոսում են Շդիայի խիստ ճշտապահության մասին, պետք է ենթադրել, որ նրա դիվանում կարգուկանոն է տիրել, մինչդեռ ներկայումս նամակների

շարքում են հաշվեցուցակներ, պարտավորագրեր և այլն: Անշուշտ, հարյուրամյակների ընթացքում արխիվից արխիվ տեղափոխությունների ժամանակ (կամ այլ պատճառներով), խախտվել է նյութերի դասավորությունը:

Ստորև ներկայացնենք յուրաքանչյուր թղթապանակ առանձին՝ ըստ կապոցների:

#### A-1

Թերթերը՝ 72, որոնցից գրվածները՝ 61: Եղիայի էջակալմամբ՝ 144 էջ: Մեծությունը՝ 21,5×16 (15,5): Վիճակը՝ լավ: Գրությունը՝ երկայուն, քառասյուն: Գիրը՝ հիմնականում՝ շեղագիր: Սև թանաք: կազմը՝ ստվարաթուղթ: Որոշ սկզբնատառեր՝ նախազարդ: Հեղինակ և գրիչ՝ Եղիա Մուշեղյան: Ժամանակը՝ 1710–1712թթ.: Վայրը՝ Էրզրում: Դիվանատան վերտառությունը՝ "Коммерческие счета Ильи Мушехова из роду Каспаровых": Մուշեղյանի նշումը՝ «Սկիզբն եղև դաֆտարիս թիւն Ռ-ՃԾԹ (1710) ապրիլի մէկ օրն Արզուրում քաղաքի» (թ. 61):

#### Բովանդակություն

Մուշեղյանի հաշվեցուցակներն են: Էջի ձախ կողմում նշումներ են եկամուտների մասին, իսկ աջում՝ ծախսերի: Նշումների այս կամ այն խմբից հետո Եղիան տալիս է իր եկամուտների և ծախսերի գումարը: Վերջիններիս մեջ էին մտնում ապրանքների գումարներին հատկացված գումարները, առևտրի նպատակով երթևեկելիս ճանապարհածախսի, սննդի, օթևանի համար և այլ վճարումները: «Դաֆտարի» գրառումներն առատ նյութ են տալիս ապրանքների տեսականու, նրանց գների, դրամական միավորների, առևտրական կենտրոնների և հարակից շատ հարցերի մասին:

#### A-2

Թերթերը՝ 34 (Եղիայի էջակալմամբ՝ 69 էջ), երկուական թերթ սկզբից և վերջից՝ դատարկ: Մեծությունը՝ 21,5×16,5: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ երկայուն: Սև թանաք: Կազմը՝ կաշեպատ դրոշմազարդ: Հեղինակ՝ Դովսի: Գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակ՝ 1719թ.: Վայր՝ Թավրիզ: Դիվանատան վերտառությունը ռուսերեն: Եղիայի նշումը՝ «Յամի տեառն 1719 հոկտեմբերի 3, Թարվեզ: Գիրք խաղի»:

### Բովանդակություն

Մոլլա Ղովսիի հեղինակած պարսից երգերի ժողովածու է՝ գրված հայատառ: Ընդգրկում է 127 բազմաժանր երգեր (ղազալ, խաղ, բայաթի, մանի, ասմունք և այլն):

#### A-3

Թերթերը՝ 164 (Եղիայի էջակալմամբ՝ 382 էջ, սկսած 331-ից՝ դատարկ): Մեծությունը՝ 16,4×10,6: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Սև քանաք: Կաշեկազմ դրոշմազարդ: Ժամանակ՝ 1721թ.: Վայր՝ Թավրիզ: Դիվանատան վերտառությունը ռուսերեն: Եղիայի նշումը՝ «Գիրք խաղից երաժշտականաց՝ հարմարեալ այլևայլ արանց... այսինքն բանաստեղծ արանց հնարեալ...»:

### Բովանդակություն

Ժողովածուն ընդգրկում է տարաժանր չափածո ստեղծագործություններ (տաղ, ասմունք, ողբ, ղազալ, քաջնիս, ալիֆլամա, լումարա, վարսաղի, մանի, դուբեյթ և այլն) մոտ 1000 քառյակ, որոնց մեծ մասը հայատառ թուրքերեն է, կան նաև աղբյուրներեն, պարսկերեն և փոքրաթիվ հայերեն բանաստեղծություններ<sup>10</sup>: Վերջիններս պատկանում են Միրանի գրչին<sup>11</sup>: Ժողովածուն ընդգրկում է նաև առակներ, առածներ, հանելուկներ, ֆրանսիական միջնադարյան գրականությունից թարգմանված «Հովուական խաղ» թատերգությունը:

#### A-4

Թերթերը՝ 65: Մեծությունը՝ 16×10,5: Գրությունը՝ միասյուն: Վիճակը՝ լավ: Սև քանաք: Կաշեկազմ դրոշմազարդ: Գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1720թ.: Վայրը՝ Թավրիզ: Դիվանատան ռուսերեն վերտառությունը: Եղիայի նշումը՝ «Առ մեծագույն Աստուծոյ փառս. Գիր վասն բժշկութեան դեղորեից և զանազան փորձեցելոյ... և օվօք ընթեռնու գիրս, ուսանի դեղքս և շնորիէ հիվանդաց վասն փառացն Յիսուսի Քրիստոսի...»:

### Բովանդակություն

Ժամանակի բուժական միջոցների մասին հետաքրքրաշարժ հավաքածու է, որի հեղինակն է քահանա Տեր-Գրիգորը, և որը ժամանակին ձեռքից ձեռք էր անցնում: Բացառված չէ, որ ներկայումս էլ այն կարող է օգտակար լինել լայն ընթերցողին, ինչու չէ, նաև՝ մասնագետին:

## A-5

Թերթերը՝ 147 (1-4 և վերջին 5 թերթերը՝ դատարկ): Մեծությունը՝ 16,3×10,5: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Սև թանաք: Կաշեկազմ: Գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1720թ.: Վայրը՝ Թավրիզ: Դիվանատան ռուսերեն վերտառությունը: Եղիայի նշումը՝ «Գիրք հնարից և պես պես արուեստից և զանազան իրաց. բազում ժամանակաց հաւաքեալ էյի, ցրիւ գրեալ, այսօր օրինեցի աստ և սկսեցա գրել...»:

### Բովանդակություն

Առօրյայի բազում ոլորտներին վերաբերող օգտակար խորհուրդներ են (բժշկություն, կոսմետիկա, արհեստ, բուսաբանություն, հանք (գտնելու), որսորդություն, խաղեր, քվաբանական խնդիրներ, ձկնորսություն, հողագործություն և այլն):

## A-6

Թերթերը՝ 106 (էջակալումը՝ 201-308): Մեծությունը՝ 15,5×11: Գրությունը՝ միասյուն: Անկազմ: Հեղինակ՝ զանազան: Գրիչ՝ անհայտ: Ժամանակը՝ 1681թ., 1616թ., 1717թ.: Վայրը՝ Աստրախան: Դիվանատան ռուսերեն վերտառությունները՝ կազմված Բ. Չուգասյանի կողմից:

### Բովանդակություն

Ժողովածու է՝ կազմված տարբեր թեմաներով հնատիպ գրքերից, նաև ձեռագիր մատյաններից վերցրած նյութերից: Ընդգրկում է. «Աղոթագիրք» (թ. 201-11): Կրոնական բովանդակության բանաստեղծությունից հատված (թ. 212-15): «Հիշատակարան» (թ. 217-18): Հատված հայերեն հնատիպ գրքից չորս տարրերի մասին (թ. 222-29): Հատված հնատիպ Աստվածաշնչից (թ. 230): «Բառգիրք վօլանդիզի» (թ. 233-59): «Առակ Սադօմօն. գլխ. առաջին, համար 20» (թ. 260-62): «Ժոսակցություն վօլանդիզի» (թ. 257բ-259): «Բարոյախոսություն» (թ. 263-270): Աշխարհագրության դասագիրք՝ հետաքրքիր աղյուսակներով, գծագրերով, տալիս է առաջին պատկերացումը աշխարհագրության մասին (թ. 271-303): Բարոյախոսություն (թ. 304-7): «Ժողովածու առակաց Սադօմօնի» (թ. 308):

## A-7

Թերթերը՝ 30: Մեծությունը՝ 33×22,5: Գրությունը՝ միասյուն, երկսյուն: Սև թանաք: Կազմը՝ երկու թուղթ միմյանց փակցրած: Գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1722թ.:

### Բովանդակություն

Մաքրագրություն ֆրանսերեն և հայերեն (թ. 1-11): Ջրուցարան ֆրանսերեն և հայերեն (թ. 12-15): «Վախճան բարովագրի դնի այսպես»՝ նամակի սկզբի և ավարտի ընդունված արտահայտություններ ֆրանսերեն (թ. 16բ): Հայերեն այբուբենը՝ ֆրանսերեն համարժեքներով (թ. 17բ): Առակներ հայերեն (թ. 18-19): Առակներ ֆրանսերեն և հայերեն (թ. 20-30):

## A-8

Թերթերը՝ 16: Մեծությունը՝ 32,5×20,5: Գրությունը՝ քառասյուն: Սև թանաք: Կազմը՝ ստվարաթուղթ: Ժամանակը՝ 1718թ., 1720թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «Դափտար Շամախու դրկած ընկերովի ապրանացն համար. եղև Թարվեզ յամի տեառն 1718 յունվրի մինն»:

### Բովանդակություն

Բերված են 1718-1720թթ. Շամախու հետ կապված ապրանքների «օրացուցային» նշումները:

## A-9

Թերթերը՝ 22 (մեծ թվով դատարկ էջեր): Մեծությունը՝ 33×22: Գրությունը՝ բազմասյուն: Սև թանաք: Կազմը՝ միմյանց փակցրած թղթեր: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1719թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «1719թ. սեպտմբրի 17, Թարվեզ: Մատեան տիֆտիկի 2» (կազմի վրա):

### Բովանդակություն

Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի տնօրեն Բորեգարի տան իրերի ընդարձակ ցուցակ (թ. 18-22), որը ոչ միայն տալիս է 18-րդ դ. Իրանի բարձրաստիճան պաշտոնյայի կենցաղի հսնգամանալի պատկերը, այլև՝ իրազեկում այս կամ այն տարածքի արդյունաբերական արտադրանքի մասին, քանի որ թվարկված իրերի կողքին շեշտվում է նրանց արտադրության վայրը (օր՝ Խորասանի գորգ): Գործի մյուս նյութերից (որոնք չեն արտացոլված դիվանատան վերտառության մեջ) ուշադրության արժանի է՝ «Հնդկաց ապրանքն ճոթեղեն» (թ. 5բ, 6, 5), որտեղ

թվարկված է կտորեղենի շուրջ 80 տեսակ, նրանցից յուրաքանչ-յուրի որակական հատկանիշները, զինը և այլն:

#### A-10

Թերթերը՝ 25 (Եղիայի էջակալմամբ 31-61՝ դատարկ): Մեծություներ՝ 31,5×20: Գրությունը՝ 2, 4 և 6 սյունակներ: Սև քանաք: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1717թ., 1723թ.: Վայրը՝ Շամախի: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «Մատեան 4, որ է իմ բանիս համար ձեռցանոց» (կազմի վրա):

#### Բովանդակություն

Մուշեղյանի հաշվեմատյանների մի տարատեսակի՝ «ձեռցատետրերի» մեջ թվով չորրորդն է. «Ձոր ինչ առևտուր անեն, գրեն այս մատենիս»: Ավելի ուշ Եղիան նշում է. «1723թ. հուլիսի 4. սրանից հետո ինչ որ ունենամ, ձախ կողմում ունեցածս [գրեմ], աջ կողմում՝ կորցրածս» (թ. 20):

#### A-11

Թերթերը՝ 46: Մեծություներ՝ 32,5×21: Գրությունը՝ երկսյուն: Սև քանաք: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ՝ Ֆուքեթ: Գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակ՝ 1723թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը վերջին էջին է. «Դեղերունքս բժշկական և պիտանի արվեստքս...» (թ. 45թ):

#### Բովանդակություն

Բժշկական ու այլևայլ խորհուրդների ժողովածու (հիշեցնում է դիվանի A-5 գործը), որը քարգմանություն է ֆրանսերեն «Մադամ Ֆուքեթ» և «Մուսեմոնի» գրքերից. քարգմանիչն է կապույին Հովհաննես Մկրտիչը, որը թուրքերենի էր քարգմանում, իսկ Եղիան վերածում էր հայերենի:

#### A-12

Թերթերը՝ 60: Մեծություներ՝ 32×20,5: Գրությունը՝ միասյուն: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1718թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառությունը: Եղիայի նշումը՝ «Մատեան առաջին, որ կոչի կերպարան կամ տիպ բարովագրի... գոր ինչ բարովագիր գրել կամիմ, նախ տեղս գրեմ և համատիպն ուղարկեմ այլոց...»:

### Բովանդակություն

Գործն ամբողջությամբ կազմված է մամակներից, որոնց կրկնօրինակները Եղիան ուղարկել է տարբեր անձանց: Ընդհանրապես, մամակները մեծ թիվ են կազմում դիվանում և հանդիպում են շատ թղթապանակներում, բայց հիմնականում խմբավորված են 4 մատյաններում:

### A-13

Թերթերը՝ 58: Մեծությունը՝ 33×21: Գրությունը՝ միասյուն: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1719թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «Մատեան երկրորդ, որ կոչի կերպարան կամ տիպ բարօվագրի...»:

### Բովանդակություն

Ամբողջովին մամակներ են, իսկ առաջին 2 էջին առկա է նախորդ մատյանի մամակների (ուղարկված և ստացված, որոնց մասին ևս նշումներ կան) ցուցակը, որտեղ ակնհայտ է մամակների քանակը, մամակագիրների անունները, ընդ որում՝ նշվում է, թե ո՞ր մամակներին է պատասխան տրվել, որոնց՝ ոչ:

### A-14

Թերթերը՝ 54: Մեծությունը՝ 32,5×20: Գրությունը՝ միասյուն, երկսյուն: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1721թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «Մատեան երրորդ, որ կոչի կերպարան և տիպ բարօվագրի...»:

### Բովանդակություն

Նամակների երրորդ մատյանն է, որը սկսվում է նախորդ մատյանի՝ գրած և ստացած մամակների ցանկով (թ. 1-2), որին հաջորդում է Եղիայի տնօրեն Բորեգարի հետ մամակագրության ցուցակը (թ. 3)՝ համապատասխան բացատրություններով: Առկա է նաև 1721թ. հունվարի 1-13-ը ստացած մամակների ցանկը. ապա սկսվում են մամակների նախօրինակները:

### A-15

Թերթերը՝ 52: Մեծությունը՝ 31×21,5: Գրությունը՝ միասյուն: Մև քանաք: Կազմը՝ ստվարաթուղթ: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1723թ.: Վայրը՝ Թավրիզ: Ռուսերեն վերտա-

ռություն: Եղիայի նշումը՝ «Մատեան չորրորդ, որ գոչի կերպարան կամ տիպ բարօվագրի...»:

#### Բովանդակություն

Ուղարկված նամակների չորրորդ և վերջին (հինգերորդը նամակներին չի հատկացվել) մատյանն է, որը դարձյալ սկսվում է նախորդ (երրորդ) մատյանի նամակների ցուցակով (թ. 1-2)՝ համապատասխան նշումներով:

#### A-16

Թերթերը՝ 20: Մեծությունը՝ 32,5×21: Գրությունը՝ միասյուն, երկսյուն: Կազմը՝ սովորաբար: Հեղինակ և գրիչ՝ Ե. Մուշեղյան: Ժամանակը՝ 1724թ.: Վայրը՝ Ռաշտ (Գիլան): Ռուսերեն վերտառություն: Եղիայի նշումը՝ «Մատեան հինգերորդ, որ կոչի կերպարան կամ տիպ բարօվագրի... Եղև յերկիրն Կիլան Ռաշտ քաղաքին»:

#### Բովանդակություն

Գործը, թեև նախատեսված էր իբրև նամակների հինգերորդ մատյան, սակայն, իրականում ընդգրկում է հետևյալ նյութերը.

ա/ «Ֆլիջան տարած ապրանքների ցուցակ» (թ. 1բ-3):

բ/ «Ֆլիջանից բերածների մեջ՝ օտար կամ ծախած» (թ. 3բ):

գ/ «Նաղիից ետ վերցրած ապրանքներ» (թ. 4բ):

դ/ «Նաղիի գողացած ապրանքներ» (թ. 6):

ե/ «Հաշիվներ» (թթ. 7, 8-16):

զ/ Եղիայի կտակը Արութինին (թ. 18, 18բ):

է/ Հաշիվ և կտակի շարունակությունը (թթ. 9-20, 20բ):

#### B-1

Թերթերը՝ 36: Ժամանակը՝ 1723թ., 1724թ.: Վայրը՝ Թավրիզ: Եղիայի նշումը՝ «Արգա, որ տվինք Մահմատալի խանին»:

#### Բովանդակություն

Մի շարք խնդրագրերի (արգա) կրկնօրինակներն են, որոնք Եղիան գրել է տվել պարսկերեն: Դրանք գլխավորապես վերաբերում են դրամական պահանջներին, սակայն կան մալ խնդիրների շուրջ արգաներ. ուղղված շահին (թ. 5), էթեմադ-օդ-դուլեին (թ. 1), դիվանբեկին (թթ. 10, 11), պատրիների անունից թագավորին՝ «համամին համար» (թ. 15բ) և այլն: Մեծադիր էջերի վրա այս պարսկերեն արգաների հակառակ երեսին Եղիայի հայերեն նշումն է վավերագրերի հանգամանքների մասին:

## **B-2**

Թերթերը՝ 100: Ժամանակը՝ 1719թ., 1724թ.: Վայրը՝ Թավրիզ, Նախչվան, Էրզրում, Շամախի: Եղիայի նշումը՝ «Իմ եխապար Մովսեսին նմրայով (իմա՝ համարակալված) երկրորդ գրերն են»:

### **Բովանդակություն**

Եղիայի եղբորից՝ Մովսեսից ստացած նամակներն են, Եղիայի համարակալմամբ՝ 100, որտեղ նշվում են, առևտրականի առօրյան, ապրանքներ, գներ, վաճառականների միջև փոխհարաբերություններ և այլն:

## **B-3**

Թերթերը՝ 184: Ժամանակը՝ 1717–1720թթ., 1723թ.: Վայրը՝ Թավրիզ: Կնիք (թ. 19): Եղիայի նշումը՝ «Ճարճի մատեանք են»:

### **Բովանդակություն**

Մեկ տասնյակից ավելի մատյաններում գրանցված են Եղիայի ծախսերը տարբեր տարիներին և տարբեր նպատակներով՝ նվիրատվության, հազուստեղենի, սննդի, ձիերի խնամքի, կենցաղային պետքերի և այլն:

## **B-4**

Թերթերը՝ 10: Ժամանակը՝ 1716թ.: Վայրը՝ Գանջա, Շամախի: Կնիքներ (թթ. 2, 5): Եղիայի նշումը՝ «Ոսկերիչ Մաթեոսի գրերն է նմրայով»:

### **Բովանդակություն**

Ոսկերիչն իր նամակներում Եղիային գրում է թանկարժեք քարերի փոխանակության, ոսկու առևտրի, գների մասին:

## **B-5**

Թերթերը՝ 54: Ժամանակը՝ 1717–1721թթ.: Վայրը՝ Թավրիզ: Եղիայի նշումը՝ «Ղևոնդի ծախսի ցուցակն է»:

### **Բովանդակություն**

Հաշվեցուցակներ են՝ դրամատան, այլևայլ մանր ծախսերի: Նաև՝ երկրաշարժ (թ. 14), իրերի ցուցակ (թ. 19–20), «Մեր թշնամիքն են Թարվեզ» (թ. 18ր):

## **B-6**

Թերթերը՝ 28: Ժամանակը՝ 1715թ.: Վայրը՝ Գանջա, Շամախի: Կնիքներ (թթ. 16–18, 21–24): Եղիայի նշումը՝ «Էրզրումեցի... Խալիլ աղի բարօվագրերն է»:

### Բովանդակություն

Նամակներում սովորական առևտրական առօրյան է:  
Շեշտվում են՝ մորթեղենի, ոսկեղենի գները, վաճառքի վայրերը...

#### В-7

Թերթերը՝ 30: Ժամանակը՝ 1715թ., 1720թ.: Վայրը՝ Գանջա, Շամախի: Կնիքներ (թթ. 6ր, 8, 10, 14ր, 16ր): Եղիայի նշումը՝ «Գանձայեցի Եսայի վարդապետի որդի տիրացու Յուսէփի գրերն է»:

### Բովանդակություն

Նամակների այս շարքը ցայտուն օրինակ է առևտրի գործերում հոգևորականի մասնակցության վերաբերյալ:

#### В-8

Թերթերը՝ 24: Ժամանակը՝ 1715թ., 1718թ.: Վայրը՝ Գանջա, Շամախի: Եղիայի նշումը՝ «Պ. Մունիէրին բարօվագրերն է և պ. Թաթեասի գրերն է»: «Էրգրումցի տեր Մելքոն իրիցու գրերը»:

### Բովանդակություն

Դարձյալ հոգևորականների մասնակցությունն է առևտրական գործերին, ընդ որում, նամակների այս խումբը վկայում է, որ հոգևորականը կարող էր ի վերջո նվիրվել առևտրին:

#### В-9

Թերթերը՝ 20: Ժամանակը՝ 1716թ.: Վայրը՝ Էրգրում, Գանջա: Եղիայի նշումը՝ «Ժմ ծնող մայր և մայրիկիս գրած ջոկ գրերն է»:

### Բովանդակություն

Մայրը Եղիային կշտամբում է և ապսպրում, որ գա և իր հայրական փլվող տունը նորոգի: Որոշակի մասնակցություն առևտրային գործերին մայրը ևս ուներ:

#### В-10

Թերթերը՝ 56: Ժամանակը՝ 1714թ.: Վայրը՝ Աստրախան, Շամախի, Թավրիզ: Կնիքներ (թթ. 21ր, 32ր, 39, 42, 44, 48, 50): Եղիայի նշումը՝ «Ժմ եխապար Ղևոնդին նմրայով գրերն է. և առանց նմրա». «Մօվսեսին նումրով բարօվագրերն է»:

### Բովանդակություն

Եղիայի եղբայրների նամակներն են՝ հարուստ տվյալներով առևտրական կենտրոնների, ապրանքների, գների, վաճառականի դժվարությունների մասին:

### **B-11**

Թերթերը՝ 119: Ժամանակը՝ 1713–1716թթ., 1718թ., 1721թ.: Վայրը՝ Էրզրում, Շամախի, Սպահան, Նիսաբուր, Աստրախան, Թավրիզ: Կնիք (թ. 92բ): Շղիայի նշումը՝ «Շամանին բարովագիրն է Էրզրմցի դաթրչի որդի»:

#### **Բովանդակություն**

Նամակագիրը Շղիային տեղեկացնում է վաճառքի համար պիտանի ապրանքների մասին (խունկ, լեղակ, սուրճ, համեմունք, քանկարժեք քարեր, ոսկեղեն, կտորեղեն), իրենց քարավանի կողոպտման և առօրյա հոգսերի մասին:

### **B-12**

Թերթերը՝ 15: Ժամանակը՝ 1722թ.: Վայրը՝ Թավրիզ, Սպահան: Էրզրումցի Գալուստի նամակներն են Շղիային:

#### **Բովանդակություն**

Ապրանքների թվարկումից զատ իրագեկվում է նաև Թավրիզում քաղաքական և տնտեսական վիճակի մասին, շեշտելով, որ «խաղաղություն է և լավ առևտուր»:

### **B-13**

Թերթերը՝ 33: Ժամանակը՝ 1717–1719թթ., 1723թ.: Վայրը՝ Էրզրում, Թավրիզ: Շղիայի նշումը՝ «Արութին էրզրումցու... գրերն է»:

#### **Բովանդակություն**

Նամակներում հիշատակվող ապրանքներից շեշտվում է՝ թուղթ, թուփոն, ձի, հրացան, լոնդրա, մետաքս, նաև տեղեկացվում է մաքսատան ու ճանապարհածախսի էժանացման մասին:

### **B-14**

Թերթերը՝ 13: Ժամանակը՝ 1714թ., 1715թ.: Վայրը՝ Ստամբուլ, Գանջա, Էրզրում, Շամախի, Թավրիզ: Կնիքներ (թթ. 3բ, 7բ, 8, 13): Շղիայի նշումը՝ «Ժմ մօրքուրի որդի Գասպարին գիրն է և Էրզրմցի ոսկ[ե]րի որդի Ալեքսանին է»:

#### **Բովանդակություն**

«Մոսկովի արաղի գովքը», ապրանքներ, գներ, հատկապես՝ մորթեղեն:

### **B-15**

Թերթերը՝ 34: Ժամանակը՝ 1723թ.: Վայրը՝ Թավրիզ: Կնիքներ (թթ. 1բ–4բ, 6, 20բ, 26բ, 28բ): Շղիայի նշումը՝ «Միրզա Մուսինի ախպօրցն գրած գրերն է, որ գրեցին աղա Մուսինին» (թ. 1բ):

### Բովանդակություն

Թվարկված են մի շարք անուններ, որոնց պարսկերենն այլևայլ գրությունների օրինակները Եղիան պահել է որպես վկայություն՝ «մեզ պարտ են»:

#### B-16

Թերթերը՝ 11: Ժամանակը՝ 1724թ.: Վայրը՝ Էրզրում, Թավրիզ: Կնիք (թ. 11): Եղիայի նշումը՝ «Վրացի Մելքումին [գիրն է]» (թ. 3ր):

Այս և հաջորդ մի քանի խիստ փոքրածավալ թղթապանակների բովանդակությունները, որոնք վերաբերում են առևտրական առօրյային, կրկնում են միմյանց:

#### B-17

Թերթերը՝ 10: Ժամանակը՝ 1721–1722թթ.: Վայրը՝ Թավրիզ: Կնիքներ (թթ. 40, 42, 45): Սարգսի նամակը:

#### B-18

Թերթերը՝ 49: Ժամանակը՝ 1711–1712թթ.: Վայրը՝ Շամախի, Թավրիզ: Վարդանի նամակները Եղիային:

#### B-19

Թերթերը՝ 12: Ժամանակը՝ 1717–1723թթ.: Վայրը՝ (°): Կնիք (թ. 3ր): Օվանեսի նամակը Եղիային:

#### B-20

Թերթերը՝ 17: Ժամանակը՝ 1718թ.: Վայրը՝ Թավրիզ: Հակոբ վարդապետի նամակը Եղիային:

#### B-21

Թերթերը՝ 95: Ժամանակը՝ 1715թ.: Վայրը՝ Էրզրում: Ղազարի (Մարգարի) նամակը Եղիային:

#### B-22

Թերթերը՝ 2: Ժամանակը՝ (°): Վայրը՝ Էրզրում: «Մահտեսի Սարգսի գրերն են»:

#### B-23

Թերթերը՝ 44: Ժամանակը՝ 1718–1723թթ.: Վայրը՝ Էրզրում: Մովսեսի նամակներն են:

#### B-24

Թերթերը՝ 138: Ժամանակը՝ 1717–1723թթ.: Վայրը՝ Էրզրում: Եղիայի եղբոր՝ Մովսեսի, նամակներն են:

### **B-25**

Թերթերը՝ 47: Ժամանակը՝ 1718թ.: Վայրը՝ Էրզրում (՝): Կնիք (թ. 47բ):

#### **Բովանդակություն**

Հաջի Աբդուլ Բադիի նամակն է (պարսկերեն) և մի շարք այլ նամակներ (Անատոլից, Սարգսից և այլն) տարբեր լեզուներով: Մանր հաշիվներ:

### **B-26**

Թերթերը՝ 111: Ժամանակը՝ 1718թ.: Վայրը՝ Գանջա: Եղիայի կնիքը (թ. 91բ):

#### **Բովանդակություն**

Հիսուսյանների կարգից Մոնիեր Լեոնարդոսի նամակներն են, նաև՝ պատրի Պավլոյի, Մտեփան չելեպու և այլոց նամակները: Պատրիները գրում են Եղիային՝ հերթական օգնության ակնկալիքով:

### **B-27**

Թերթերը՝ 54: Ժամանակը՝ 1717-1718թթ.: Վայրը՝ Գանջա:

#### **Բովանդակություն**

Կաթուղիկ պատրի Թադեոսի նամակներն են Եղիային:

### **B-28**

Թերթերը՝ 52: Ժամանակը՝ 1724թ.: Վայրը՝ Թավրիզ: Կնիքներ (հայերեն, վրացերեն, պարսկերեն՝ թթ. 8, 28, 45, 48, 49):

#### **Բովանդակություն**

Մի շարք վկայագրեր են, որոնց թվում՝ դիվանբեկիի շնորհագիրը «բաղնեցն համար»:

### **B-29**

Թերթերը՝ 14: Ժամանակը՝ 1717-1718թթ.: Վայրը՝ Էրզրում:

#### **Բովանդակություն**

«Իմ եխապարագած էրզրոմցի քուչի Սարգսի... գրերն է»:

### **B-30**

Թերթերը՝ 78: Ժամանակը՝ 1718թ.: Վայրը՝ Թավրիզ: Կնիքներ (թթ. 3, 8, 9, 19, 20, 23բ, 24, 26բ... 51):

#### **Բովանդակություն**

Նամակներ են, հաշիվներ, մուրհակներ, վկայագրեր, պայմանագրեր և այլ փաստաթղթեր, որոնց կից՝ կնիքներ:

### B-31

Թերթերը՝ 134: Ժամանակը՝ 1715–1721թթ.: Վայրը՝ Շամա-  
խի (°): Կնիքներ (թթ. 26, 27ր, 28, 36... 90):

Բովանդակություն

«Ապարաներու պարոնաց գրերն է»: Լատին կրոնավորների  
այլևայլ խնդիրների լուծման համար Եղիան միջնորդ էր իշխա-  
նությունների մոտ:

### B-32

Թերթերը՝ 54: Ժամանակը՝ 1715–1716թթ.: Վայրը՝ Թավրիզ,  
Գանջա, Սպահան: Կնիքներ (թթ. 44...):

Բովանդակություն

«Բազում արանց և կանանց գրեանք են»: Իսկ 41–րդ քերթից  
սկսած պարսկերեն ցուցակ է «Նադիին գողացած ապրանագ», ա-  
պա՝ բարձրաստիճան անձանց ուղղված խնդրագրեր են զանա-  
զան հարցերով:

### C

Թերթերը՝ 73: Ժամանակը՝ 1723թ.: Վայրը՝ (°):

Բովանդակություն

Եկեղեցական պատմություններ, քարոզգրքեր, ֆրանսերեն  
ձեռագիր (16, 5, 11), հայերեն դավանաբանական տեքստ (Եղիա-  
յի ձեռագիրը չէ):

### D-1

Թերթերը՝ 143: Ժամանակը՝ 1721թ.: Վայրը՝ գյուղ Խլիջան:

Բովանդակություն

Ֆրանսերեն–ռուսերեն բառարան՝ ֆրանսատառ (թթ. 1–43),  
հայերեն–ֆրանսերեն բառարան՝ հայատառ (թթ. 44–120), հայե-  
րեն և ֆրանսերեն քերականական վարժություններ՝ հայատառ,  
ֆրանս–պարսկերեն բառարան՝ ֆրանսատառ (թթ. 129–143):

### D-2

Թերթերը՝ 69: Ժամանակը՝ 1724թ.:

Բովանդակություն

Հայերեն–ֆրանսերեն բառարան՝ հայատառ:

### D-3

Թերթերը՝ 34: Ժամանակը՝ 1715թ.: Վայրը՝ Շամախի:

Բովանդակություն

«Գիր արհեստին համարողութեան», տետր առաջին «Ար-  
հեստ համարողութեան, որ պիտանի վաճառականաց»:

## **Է-1-2**

Կապույչին Ռոշենֆորի՝ Թավրիզից և Ասսուրախանից տարբեր անձանց ուղարկված նամակներն են՝ հայերեն, ժուսերեն և պարսկերեն:

## **Է-1**

Թերթերը՝ 194: Ժամանակը՝ 1717թ., 1722թ.: Վայրը՝ Շամախի, Թավրիզ:

### **Բովանդակություն**

Թավրիզում Եղիայի տնօրեն Բորեգարի նամակներն են Եղիային (վաճառականի առօրյա, քանկություն Իրանում, կողոպուտ ճանապարհներին):

## **Է-2**

Թերթերը՝ 30... Ժամանակը՝ 1722թ.: Վայրը՝ Սպահան:

### **Բովանդակություն**

Իրերի ընդարձակ ցուցակ է, որոնք Թավրիզի երկրաշարժից հետո Եղիան պահ էր տվել Նադուն, որի կողմից հետագայում այն յուրացրել էր:

## **Է-3**

Թերթերը՝ 178: Ժամանակը՝ 1716-1722թթ.: Վայրը՝ Մոսկվա, Պետերբուրգ:

### **Բովանդակություն**

Նամակագրություն, հաշիվներ, պարտավորագրեր, ընծաներ շահին:

## **Է-4**

Թերթերը՝ 135: Ժամանակը՝ 1716-1720թթ.: Վայրը՝ Աստրախան, Մոսկվա, Պետերբուրգ:

### **Բովանդակություն**

Տեր-Ավագի նամակներն են (նամակ-պարտավորագրեր, մուրհակներ, կտակ, հաշվեցուցակ (թթ. 109-131):

## **Է-5**

Թերթերը՝ 203: Ժամանակը՝ 1714-1719թթ., 1723թ.: Վայրը՝ Մոսկվա, Պետերբուրգ, Շամախի, Աստրախան:

### **Բովանդակություն**

Տեր-Ավագի հետ կապված գրություններ և նամակներ, պարտամուրհակներ, հաշվեցուցակներ: Ռուս-պարսկական առևտուր: Մաքս: Թուրքերեն-հայերեն բառարան:

#### G-4

Թերթերը՝ 189: Ժամանակը՝ 1722թ.: Վայրը՝ Սպահան, Մոսկվա:

#### Բովանդակություն

Առևտրական կապեր Մոսկվայի հետ: Հայ-ֆրանսերեն բառարան՝ հայատառ (թթ. 153-175):

#### G-5

Թերթերը՝ 124: Ժամանակը՝ 1712թ., 1717-1721թթ.: Վայրը՝ Ղու, Խլիջան, Գիլան, Նիսաբոլ, Աստրախան:

#### Բովանդակություն

Առևտրական գործարք Մոսկվայի՝ հետ: Կտակ և կից՝ պարտավորագրեր: Եղիայի օրագրությունը: Հաշվետետր:

LORETA DANEGIAN

#### A UNIQUE HERITAGE

For the first time a scientific description of a unique divan (archive) is presented in the article which is inherited to the generations by the 18<sup>th</sup> century Armenian merchant, folklorist, social and political statesman Yeghia Karnetsi Musheghyan. The divan is kept in Moscow "in the Archives of Foreign Policy of Russia". The divan, which is of a great scientific interest, includes letters, commercial and official documents, different collections (songbook, medical book, prayerbook, dictionary, translation etc.). The geometric boundaries of the materials used in the divan spread from Iran, Iraqi, India, Russia, Turkey to European countries etc. This valuable divan is worth the attention of large scientific areas. The article includes all 61 files of the divan.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն ունի հետևյալ վերտառությունը. «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ ամձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրեցի ի ազգէն ֆռանկաց...»: Բնագիրը պահվում էր Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում:
2. Ե.Մուշեղյանի համառոտ կենսագրությունը տե՛ս՝ Լ.Դանեղյան, «Հայատառ բանաստեղծությունների ժողովածու Եղիա Մուշեղյանի դիվանում» («Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Երևան, 1996):
3. "Архив внешней политики России "Историко-дипломатического управления МИД СССР, ф. 100 "Сношения России с Арменией". Ֆոնդն այստեղ է բերվել Մոսկվայի մախկին կենտրոնական արխիվներից մեկից (ԳԱՓԿՅ) 1724թ.:

4. Եղիայի քանտարկության գործի մասին ահ'ս՝ Լ.Դանեղյան, Եղիա Մուշեղյանը՝ ռուսական կողմնորոշման ջատագով (նշվ. ժող., XVII, Երևան, 1998):
5. "Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа", т. I, М., 1833, с. 363—364.
6. «Եղիա Կարնեցու դիվանը», աշխատասիրությամբ Ա.Արրահամյանի, Երևան, 1968:
7. Բ. Չուգասզյան, Ա. Երևանի, Լ. Դանեղյան և այլք:
8. Տե՛ս Լ. Դանեղյանի և Բ. Չուգասզյանի զեկուցումների դրույթները («Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, 15—19 սեպտ., 1986, Երևան»):
9. Դիվանատան ռուսերեն վերտառությունները մեջբերելուց այսուհետև ձեռնպահ կմնամք:
10. Սույն ժողովածուի մասին տե՛ս՝ Լ. Դանեղյան, Հայատառ քանաստեղծությունների ժողովածու Ե. Մուշեղյանի դիվանում (նշվ. ժող., էջ 197—209):
11. Տե՛ս՝ Մ. Սեփրով, Հայ քանաստեղծ Միրսին աղորբեջաներեն քանաստեղծությունները («Աղորբեջ. ԽՍՀ ԳԱ Նիզամու անվ. գրակ. և լեզվի ինստ.—ի աշխատություններ», Բաքու, 1956, աղորբեջաներեն):